

ԳՐԱԿԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱՏԱՐԱԿԻԵՐ, «ԴՐԱԽՏԱՎԴԻՐՔ»

Հրատարակեց՝ ներսի Վարդապետ Տեր ներսույան
(Վեհափոխ, տպ. Ս. Ղազարի, 1956 թ., 204 էջ)

«Թամա երգերու բաժնված, ուսանալոր, միջնադար-
յան աշխարհաբարով, այց մը անդենական աշխարհին,
և եւկալյալ խոսկացության, անդրաշխարհի հոգի-
ներուն մետք»:

«Ենեաթիկի Միմիարյանները շնորհակալ գործի են
ձեռնարկի տաղագրության հանձնելով «Թանգարան
հայկական ճիշ և նոր դպրույան մատենաշարի գըր-
քերը, որոնց զարգում գրախոսվող «Դրախտավդիրք»-ը
ուժինորդն է»:

«Դրախտավդիրք»-ը վերագրվում է ժօն գարի բազ-
մակողմանի և բնուած մատենագիր Առաքել Սյունեցուն:
Եարունակությունը և վերջն է «Ազամագիրք» անունով
մազ հասած Սյունեցու կրոնաշունչ պոմի, որի երեք
տարրեր պատումները խզմամիտ ուսումնասիրությամբ
հրատարակել է 2. Մկրտիչ Պոտուրյանը»:

Առաքել Սյունեցին միջնադարյան (1355—1425 թ. թ.)
ժամանագիր է: Նդեռ է Սյունեց հպիսկոպոս, Տաթկի
առաջնորդ: Այդ հանգամանքով նա հասցրել է բազ-
մաթիվ աշակերտներուն ուրիշ ժամանակ նաև եղել է նաև
ծաղկող, բնուած մատենագիր, տաղանգավոր բանա-
ստեղծ, Շեղինակ տաղերի, նկրողների, թերականու-
թյան և այլն նրան են վերագրվում նաև զուտ աշխար-
հիկ բովանդակությամբ արժեքավոր բանաստեղծու-
թյուններու Գրիգոր Տաթեացու քրոջ որդին էր և աշա-
կերու թեսու ազդեցությունը շատ մեծ է եղել նրա
և նկանական և գրական գործունեության վրա:


Նրա անունով մեզ են հասել բազմաթիվ գրաքար
և միջնադարյան աշխարհաբարով գրվածքներ Գրուի
գործոցն է «Ազամագիրք»-ը՝ երեք տարրեր և ան-
հավասարաշափ ծավալով պատումներով: Գրված է
1401—1403 թվականներին՝ գրաքարով:

«Դրախտավդիրք»-ը ունի հետևյալ բաժինները.

ա) Առաջարան, որտեղ հրատարակիչը տեղեկու-
թյուններ է տալիք Առաքել Սյունեցու երկների և կյան-
քի մասին: Բայսական ընդուռածակ և խզմամիտ բըն-
նության են առնվում հրատարակիչ տարամադրության
տակ գտնվող «Դրախտավդիրք»-ի ձեռագրերը, ճշաված
են գրեթ հարազատությունը, բովանդակությունը, գրա-
կան արժեքը, լինուն:

բ) Բուն «Դրախտավդիրք»-ը, մի փոքր արձակ հա-
խարան, որտեղ յոթեր տարրեր առումներով տրվում է
Շեղինակի ըմբռնումը գրախտ—բաղաք—գերեզման
հասկացության: Դրան հաջորդում է բասար գլուխների
(Հառերի) արձակ ամփոփումը:

Երերի ներկում արմել են ձեռագիր օրինակների
ունեցած տարրերությունները, ինչպես նաև Աստվա-
ծածուն գրոց հետ համամատությունները: Տպագրում
նառերը բաժանված են բառատող տեսքու (բնագրում



տները երկաող են): Ցուրաքանչյուր ճառից առաջ զի-
տեղված է ամփոփումն արձակ տողերով: Զափի հիմ-
նականում ընթանում է 4—4—5 տաղաշափական հա-
տածներով Ընթերցումը ծանրանում է հանգերի միօրի-
նակության (գլխավորաբ և այս պատճա-
ռով: Ճառից ճառ գիտվում է նյութի ոչ համաշափ
զարգացում: Ժի ճառի նախարանը իր բովանդակու-
թյամբ չի համապատասխանում իրնն հաշրջողու ՖՇ
տուն գրաքարերին: Դիտում է նույնական խորթ գրինե-
րից համերում Հրատարակիչը որոշ շափով կանգ է
առել նշված թերությունների վրա:

«Դրախտավդիրք»-ի լեզուն Սյուների միջնադարյան
աշխարհաբարն է: Ուշագրավ է նրան և կիլիկյան աշ-
խարհաբարի մոտիկությունը: Երկակայություն, պատ-
կերների ինքնատիպություն, հոգու թափ և բազմապիսի
գոտին այլ շնորհներ, որոնք Առաքել Սյունեցու Շեղա-
մագիրքը և տաղերի մեջ այնքան առատ են, համեն
մատաքար նվազ շափով են համեստ գալիս «Դրախտա-
վդիրք»-ում:

Առաքել Մյունիցու «Դրախտագիրք»-ը իր գրական արժեքից ավելի նշանավոր է իբրև կրոնա-բարոյական խրատների ժողովածու Հեղինակի նպատակն է եղել «այս աշխարհի բնակիչները իր հնատ առնելով՝ փենտուլու ելլել այն անծանոթ քաղաքը, ուսկից արտաքրված էր Ադամ»:

գ) Հավելված, որը նվիրված է Հ. Թյուրայանի «Դրախտագիրք»-ի ձեռագիր օրինակին:

դ) Բառարան, որտեղ արված են օտար, գավառական և հազվագյուտ բառերի բացատրությունները:

Չեռագրի վրա չկա «Դրախտագիրք» տիտղոսը Այդ Ալիշանին ենք պարուական Այդպես են կոչել՝ ենթով ընդհանուր բավանդակությունից, «Դրախտագիրք»-ը թվում է «Աղամազգիրք»-ի շարունակությունը լինել եթե առաջնում պատկերվում է նախագծողների դրախտից արտաքսումը, նրանց գառն զցումն ու ապաշավը, երկրորդում միջոցներ ու պայմաններ են առաջարկում երկնավոր դրախտը նվաճելու համար։

Մարդու անկումը և վերստին իր կորույալ երջանկության հետամտելու թեման կա հին ժողովուրդներից շատերի մոտ Դա միջնադարյան քրիստոնյա աշխարհի ամենասիրելի նյութերից մեկն էր Մեր կրոնա-

կան գրականության մեջ այդ ուղղությամբ առանձնապես աշքառու են նույն բովանդակությամբ «Հարցումն Լուսաւորչին և պատասխանն նրեշտակին», և Կարգան Այգեկցու «Վասն դժոխոց և աճեմուն որդոց» գրությունները։

Հ. Ներսես Տեր Ներսեսյանը Վենետիկի միարանության ժրաշան անդամներից մեկն է, «Բազմագլուխ»-ի ամենաեռանգույն աշխատակիցն ու խմբագիրը «Դրախտագիրք»-ը հրատարակչի առաջին մենագրությունն է։ Հատորի 59 էջոց առաջաբանը ցույց է տալիս հրատարակչի հմտությունն ու խղճառությունը, մուտեցման բազմագլուխանիությունը, «Դրախտագիրք»-ի հրատարակության փաստը վկայությունն է նրա ճաշակի, հետաքրքրությունների թանասերի, հավաքողի իր կարողությանց վրա նա ավելացնում է ուժեղ հայկարանությունը նրա սուրբ տեսողությունից չեն խուսափում մամուլում տեղ գտած լեզվական խաթարումները, որոնք ուժգնորեն ձաղկելը, ինչպես իր ժամանակին Հ. Ա. Ղազիկյանն էր արել, իր ակադ պարտականությունն է նկատում։

Ա. Խ.

